Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-22/2» ծածկագրով հրատապության հիմքով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.12.2022թ. ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի նախագահ

Ժ. Տիտիզյան – ՖՆ գործառնական վարչության պետ,

Անդամներ

Գ. Վարդանյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ,

Լ. Այվազյան - ՖՆ գործառնական վարչության պետական բյուջեի հաշվառման բաժնի պետ,

Գ. Բաղդասարյան - ՖՆ գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի պետ,

Ա. Սարգսյան – ՖՆ բյուջեների կատարման հաշվետվությունների վարչության ֆինանսական հաշվետվությունների բաժնի պետ,

Գնումները համակարգող

Վ. Սիմոնյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության մասնագետ:

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>**

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1-ը և հավելված 1.2-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (փաստաթղթի վրա երևում է ստորագրողի տվյալները, ստորագրման ժամը, բայց այն երևում է որպես պատկեր, այլ ոչ թե որպես էլեկտրոնային թվային ստորագրություն),

2. Աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնություններից տեսանելի չէ աշխատակիցների աշխատանքային փորձառության համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին՝ պարզ չէ, թե որ աշխատակիցը որ աշխատանքի կատարման համար է համաձայն ներգրավվել աշխատանքներում,

3. Համաձայն հրավերի՝ մասնակիցը հայտով պետք է ներկայացներ աշխատանքներում ներգրավված մասնագետների ինքնակենսագրության և դրանում

ներկայացված տեղեկատվության համապատասխանության մասին առնվազն երկու գործատուի կողմից ներկայացրած հաստատումների պատճենները: «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ն հայտով բոլոր մասնակիցների համար ներկայացրել է ինքնակենսագրություններ, որոնք կարծես թե բեռնվել են «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ի համակարգի միջոցով (բոլոր ինքնակենսագրությունները «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ի ձևանմուշի վրա են կազմված): Հաշվի առնելով, որ ըստ ինքնակենսագրությունների՝ բոլոր մասնագետները աշխատել են միայն «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ում՝ ենթադրվում է, որ մասնակիցը այս փաստաթղթերը ներկայացրել է որպես ինքնակենսագրությունում ներկայացված տեղեկատվության համապատասխանության մասին գործատուի կողմից ներկայացրած հաստատում: Այս դեպքում տվյալ փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ու բացակայում են մասնագետների ինքնակենսագրությունները («ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ից բացի այլ գործատուների առկայության դեպքում նաև այդ գործատուներից առնվազն մեկի կողմից տրված հավաստումները), որը հաստատելու համար ներկայացվել են սույն փաստաթղթերը:

Եթե ներկայացված ինքնակենսագրությունները/գործատուի կողմից տրված հավաստումները ներկայացվել են որպես ինքնակենսագրություններ, և նշված անձիք աշխատել են միայն «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ում, այդ դեպքում հայտում բացակայում է միակ գործատուի՝ «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ի գրավոր, էլեկտրոնային ստորագրած հաստատումը՝ ինքնակենսագրությունում ներկայացված տեղեկատվության համապատասխանության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «ԼՍՈՖՏ » ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի դեկտեմբերի 30-ին ժամը 11:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Ժ. Տիտիզյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Գ. Վարդանյան
	_____	Լ. Այվազյան
	_____	Գ. Բաղդասարյան
	_____	Ա. Սարգսյան
Գնումները համակարգող՝	_____	Վ. Սիմոնյան